Հայտարարություն

Լրանում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի լիազորությունների ժամկետը:

16-30 տարեկան այն երիտասարդները, ովքեր ցանկություն ունեն ընդգրկվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր նոր երիտասարդական խորհրդի կազմում և համապատասխանում են ներքոնշյալ չափանիշներին՝ ա/ երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրների տիրապետում, բ/ երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերի կամ միջոցառումների մասնակցության փորձ, գ/ երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն, կարող են մինչև 2018 թվականի մարտի 28-ը դիմել մարզի քաղաքների, ինչպես նաև 3500 և ավել բնակիչ ունեցող համայնքների համայնքապետարաններ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի
մարզպետարանի աշխատակազմ